«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը

Հաստատությունը՝ Աշտարակի թիվ 1 Մանուշակ մանկապարտեզ

Դաստիարակ՝ Նարինե Խաչատրյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Մանկավարժությունը որպես գիտություն,նրա առարկան և օբյեկտը……4

1.1.Մանկավարժի մասնագիտության ծագումն ու զարգացումը……..4

1.2.Դաստիարակ-մանկավարժի սոցիալական գործառույթները……..5

Գլուխ 2. Նախադպրոցական հաստատության մանկավարժին ներկայացվող պահանջները ……8

2.1 Նախադպրոցական մանկավարժի մասնագիտական գիտելիքների և

անձնային որակների միասնականության բնույթը……8

2.2 Մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը ……11

Եզրակացություն……15

Գրականության ցանկ……16

Ներածություն

Մանկավարժությունը գիտություն է աճող սերնդի դաստիարակության, կրթության և ուսուցման օրինաչափությունների մասին:

Մանկավար- դաստիարակի կամ ուսուցչի մասնագիտությունը հավերժական, չխամրող, ժամանակի մեջ երբեք չանհետացող մասնագիտություն է, որովհետև նրա գործը նոր սերնդին կրթելն ու դաստիարակելն է: Այդ աշխատանքը համարվում է մարդկության մեծագույն գործերից մեկը,իսկ նրա օբյեկտը՝ սանը:Իր դժվարին, բայց միևնույն ժամանակ հետաքրքիր մասնագիտական գործընթացն իրականացնելիս մանկավարժ-դաստիարակը մասշտապես
գտնվում է բազմա բնույթ սոցիալական կապի (գործընկերային,ծնողական, աշակերտական),շփումների մեջ որն էլ նրա համագործակցային հաղորդակցական դերակատարությունը ավելի խորը և բազմակողմ հոգեբանամանկավարժական բովանդակություն է հաղորդում:

Աշխատանքի արդիականությունը

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրվում և ներկայացվում է մանկավարժական աշխատողի կերպարը, նրան ներկայացվող մասնագիտական պահանջներ, գիտելիքները, հմտությունները:

Աշխատանքի նպատակը

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մանկավարժական աշխատողին ներկայացվող ժամանակակից պահանջները:

Աշխատանքի խնդիրները

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները

- բացահայտել նոր գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձևերը,մեթոդները,վեր հանել գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությունը,
- ներկայացնել մանկավարժական աշխատողի անհատականությունը,ներքին կուլտուրան, ստեղծագործությունը,

Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, 2 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն ունի 2 ենթագլուխ, եզրակացությունից և գրականության ցանկից:

Գլուխ 1. Մանկավարժությունը որպես գիտություն, նրա առարկան և օբյեկտը

1.1. Մանկավարժի մասնագիտության ծագումն ու զարգացումը

Մանկավարժությունը դաստիարակության մասին գիտություն է: Դաստիարակությունը, որպես օրինաչափ մանկավարժական գործընթաց սկիզբ է առել նախնադարյան համայնակարգից ստրկատիրական հասարակարգի անցման շրջանում՝ ձեռք բերված փորձը սերնդեսերունդ փոխանցելու անհրաժեշտությունից: Մարդիկ շատ արագ սկսեցին հասկանալ, որ հասարակության զարգացման ընթացքը պայմանավորված է փորձի կուտակված փոխանցման արդյունավետությամբ և աճող սերնդի կողմից փորձի յուրացման աստիճանով: Մանկավարժի մասնագիտությունը ամենահին և պատվարժան մասնագիտություններից է: Ի սկզբանե սոցիալական փորձը փոխանցվել է ավագ և կրտսեր սերունդների համատեղ գործունեություն, կառուցվող բնականոն հարաբերությունների և աստիճանաբար ձևավորվող ավանդույթների միջոցով: Ընտանիքների կազմավորման հետ մեկտեղ գոյանում են դաստիարակության ընտանեկան ձևեր, որոնց դերը կայանում է երեխաների դաստիարակության ընթացքում ծնողների և հարազատների առավել պատասխանատվության մեջ:Այստեղ ընտանիքի բոլոր անդամները հանդես են գալիս մանկավարժի դերում: Հասարակության զարգացման պահանջներին դաստիարակության բարդ գործընթացը համապատասխանեցնելու նպատակով առանձնացվում են հատուկ մարդիկ, որոնց վստահվում է դաստիարակության պատասխանատու գործը: Դաստիարակ բառն ունի պարսկական ծագում: Հին Պարսկաստանում փոխարքային անվանել են դաստիարակ և նա պատասխանատու էր սերնդի հոգևոր զարգացման համար: 《 Մանկավարժ》 բառը առաջին անգամ օգտագործվել է Հին Հունաստանում, հունարենից թարգմանաբար այն նշանակում է 《երեխային ուղեկցող》 : Մանկավարժական մտքի զարգացումն անցել է երկար ճանապարհ: Նրա իմաստավորմամբ զբաղվել են հյուն մեծ փիլիսոփաներ Դեմոկրիտը, Սոկրատեսը, Պլատոնը, Արիստոտելը: Կրթության համակարգի կայացման գործում մեծ են նաև հայ մանկավարժական մտքի զարգացման դերը:

Անձի ձևավորման խնդիրը բոլոր ժամանակահատվածներում իրականացվել է մանկավարժական գործունեության միջոցով, որը կազմակերպվել է հասարակարգի հեռահար

նպատակներին համապատասխան: Ավտորիտար հասարակարգերում, փակ հաստատություններում, որտեղ մարդու ինքնավարությունը հնարավոր էր թույլատրված

ազատության սահմաններում, դաստիարակության խնդիրներն ուղղված էին կարգապահ և կատարող քաղաքացիների ձևավորմանը: Մանկավարժական մտքի ձևավորման ընթացքում

իրենց ուրույն տեղն ունեն ռուս հանրաճանաչ մանկավարժներն ու խորհրդային մանկավարժության վառ ներկայացուցիչները:Առաջին մանկապարտեզը հիմնել է

Գերմանիայի մանկավարժ Ֆ. Ֆրյոբելը Բլակենբուրգ քաղաքում՝ 1837 թվականին: Ֆ. Ֆրյոբելի

նպատակն է եղել փորձարկել սեփական մանկավարժական մոտեցումները նախադպրոցականի դաստիարակության հարցում: Նրա նպատակն է եղել մայրիկներին սովորեցնել երեխային դաստիարակելու գործնական կարողություններ և այն տարածել:

Նախադպրոցական կրթության արդյունավետությունը պայմանավորված է որակյալ մասնագետների առկայությամբ:

1.2 Դաստիարակ_մանկավարժի սոցիալական գործառույթները.

Մանկավարժի գործունեությունն ուղղված է անձի ձևավորմանը և զարգացմանը:

Մանկավարժի նպատակն է բացահայտել մարդկային էությունն ու հոգու կառուցումը: Մանկավարժը չի մասնակցում հասարակական արդյունաբերության գործընթացին,սակայն նա ձևավորում է մարդ, որը հատկության նյութական և հոգևոր բարիքների ստեղծողն է: Մանկավարժի առաջնային սոցիալական գործառույթը

մարդկային ներուժի, նրա ոգեղենության վերարտադրումն է:Պահպանելով և փոխանցելով համամարդկային արժեքներ, հաղորդակից դարձնելով երեխային արժեքային համակարգին, մանկավարժը սերմանում է կատարյալ մարդկային էություն ձգտելու ցանկություն,զարգացնում է հոգևոր արժեքներ կրողի զգացողեության, նպաստում հասարակության արժանապատիվ անդամ լինելու ձգտումը: Մանկավարժն աշխատում է "ներկայացում", սակայն կառուցում է "ապագան": Մանկավարժի կարևոր խնդիրներից է ապագա քաղաքացու գերակա արժեքների նախագծումը և դրանց փոխանցման ուղիների մշակումը: Իրականում, մանկավարժի գործունեության իմաստն ավելի բարդ է և պատասխանատու, քան թվում է առաջին հայացքից: Այն ուղղված է ինքնուրույն մտածելակերպի և կյանքի դիրքորոշման ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս ազատ կողմնորոշվելու և գիտակցաբար ընտրելու հասարակության հետ. հայտնաբերվելու եղանակները: Մանկավարժի սոցիալական գործառույթներից է օգնել երեխային հարմարվել տվյալ հասարակության սոցիալմշակութային միջավայրին:Մանկավարժի սոցիալական գործառույթներից է ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխանող մանկավարժական գործունեության ծավալումը:

Վերջապես, մանկավարժը կատարում է ևս մեկ կարևորագույն գործառույթ, նրան է վստահված աճող սերնդի զարգացման,վերահսկման պատասխանատու գործը:
Պատասխանատու լինելով հասարակության առջև, մանկավարժն հաշվետու է նախ ինքն իր առջև, նա անընդհատ շտկման և վերակառուցման է ենթարկում իր կողմից կազմակերպվող մանկավարժական գործունեությունը: Մանկավարժն իր բոլոր սոցիալական գործառույթներն իրագործում է մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Մանկավարժական գործունեությունը մանկավարժի մասնագիտական գործիքն է: Մանկավարժական գործունեության կարևորագույն օղակներից է դրդապատճառային համակարգը,որն իմաստավորվում և բնութագրում է մանկավարժի գործունեության բնույթն ու գործելակերպը: Մանկավարժական գործունեության դրդապատճառները ձևավորվում են աստիճանաբար և մասնագիտական կրթության ու գործունեության ընթացքում ենթակա են զարգացման և վերանայման:

Մասնագիտական կայացման սկզբնական շրջանում մանկավարժը, որպես կանոն, առաջնորդվում է ինքնիշխանության հաստատման սկզբունքով և բնականաբար,նրա

մանկավարժական գործունեության հիմնական դրդապատճառն է դառնում իշխանության ձեռքբերման միջոցով ինքնահաստատվելու պահանջը:

Եզրակացություն

Կատարելով համապատասխան ուսումնասիրություններ և հետազոտելով մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանջները՝ եկա հետևյալ եզրահանգման.

. Մանկավարժ դաստիարակը պետք է ունենա վստահութիուն իր սաների կողմից.

.Լինի նախաձեռնող, արդարացի,բարիացակամ,

. ՈՒնենա մասնագիտական գիտելիքներ, տիրապետի նախադպրոցական մանկավարժությանը, իմանա տարիքային առձանձնահատկությունները,

.Ունենա ստեղծագործական ուր միտք, կարողանա բավարարել երեխաների բազայում հարցերի պատասխանները:

. Այսպիսով ժամանակակից մանկավարժը պետք է գտնի բազմաթիվ մեթոդներ և հնարներ, որպեսզի կարողանա պատվով իրականացնել նախադպրոցականի կրթությունն ու դաստիարակությունը:

Գլուխ 2.Նախադպրոցական հաստատության մանկավարժին ներկայացվող պահանջները

2.1 Մասնագիտական գիտելիքների ֆ անձնային որակների միասնականության

Մանկավարժական գործունեությունն իրենից ներկայացնում է մանկավարժի ինքնազարգացման և ինքնակատարելագործման համար հիմք հանդիսացող,հետադարձ արձագանք ակնկալող նպատակային մանկավարժական գործունեության՝ ուղղված սերնդի կայացմանը,յուրաքանչյուր երեխայի ֆիզիկական, անձնային, ինտելեկտուալ հուզակամային զարգացմանը: Ինչպես նաև ցանկացած գործունեություն, այն կառուցվածքային տարրերից բաղկացած մանկավարժական համակարգ է ուր հնարավոր են ներքին փոփոխություններ և տեղափոխություններ: Մանկավարժական գործունեությունը նպատակաուղղված գործունեություն է, որի արդյունավետությունը կախված է գործունեության նպատակի և արդյունքի փոխպայմանավորվությամբ: Մանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են.

—Մանկավարժական գործունեության դրդապատճառները.

—Մանկավարժական գործունեության նպատակը.

—Մանկավարժական գործունեության օբյեկտը.

—Մանկավարժական գործունեության իրականցման միջոցները.

—Մանկավարժական գործունեության արդյունքը:

Մանկավարժական գործունեության կարևորագույն օղակներից է դրդապատճառային համակարգը,որն իմաստավորում ր բնութագում է մանկավարժի գործունեության բնույթն ու գործելակերպը: Մանկավարժական գործունեության դրդապատճառները ձևավորվում են աստիճանաբար և մասնագիտական կրթության ու գործունեության ընթացքում ենթակա են զարգացման և վերանայման:

Մասնագիտական կայացման սկզբնական շրջանում մանկավարժը,որպես կանոն առաջնորդվում է ինքնիշխանության հաստատման սկզբունքով և բնականաբար, նրա մանկավարժական գործունեության հիմանական դրդապատճառն է դառնում իշխանության ձեռքբերման միջոցով ինքնահաստատվելու պահանջը: Չափից ավել կարևորելով և չարաշահելով իր մանկավարժական դիրքը: Մանկավարժական գործունեության ընթացքում օրինաչափ է մանկավարժի կողմից սեփական գործունեության առաջնայնության հաստատման ձգտումը,մանկավարժական

գործընթացը ղեկավարելու ցանկությունը: Մանկավարժական գործունեությունն իրենից ներկայացնում է մանկավարժի և երեխաների փոխներգործության յուրահատուկ ձև, որից և պետք է բխեն գործունության դրդապատճառները: Մանկավարժական գործունեության խթանի դեպքում կարող են հանդս գալ արտաքին բնույթի տարրեր դրդապատճառներ,օրինակ սեփական մասնագիտական կարողությունների և նվաճումների մեջ համոզվելու և ինքնահաստատվելու ցանկությունը: Դրանք կարող են լինել նաև ներքին բնույթի՝ օրինակ սեթական գործունեության արդյունքները տեսնելու և գնահատելու, մանկավարժական գործունեության նոր ուղիներ փնտրելու և փորձարկելու անհրաժեշտությունը: Նշված դրդապատճառները խրախուսելի են,սակայն կրում են մասնակի բնույթ և կարիք ունեն զարգացման: Մանկավարժական գործունեության բուն դրդապատճառները գոյանում են մասնագիտոիթյան կարևորագույն գիտակցման հետ մեկտեղ: Դրանք բխում են երեխաների շահերից և ուղղված են նրանց ապագայի կառուցմանը: Միայն այս դեպքում է մասնագիտակն գործունեությունն անձնավորվում երանգավորում և կարծես, ձեռք է բերում իմաստ: ԻՄաստավորված մանկավարժական գործունեությունն արդեն դրդում է մասնագիտական ինքնազարգացման և ինքնակատարելագործման: Հանրահայտ հոգեբան Ա.Ն. Լեոնտևի դիպուկ ձևակերպամբ, նշված դրդապատճառներն իմաստակառույց են: Մանկավարժական գործունեության հաջորդ կառուցվածքային տարրը մանկավարժական գործունեության նպատակն է: Այն առանձնացվում է հասարակության կողմից և կրում է ընդհնրացված բնույթ: Նշանակված օղակը հետաքրքիր է նրանով,որ մանկավարժին հնարավորոըթյուն է ընձեռվում յուրովի մեկնաբանելու ընդհանու նպատակը,առանձնացնելու մասնակի նպատակներ և ձևավորվելու սեփական մասնագիտական գործունեության մանկավարժական դիրքորոշում:

Նախադպրոցական տարիքում երեխայի դաստիարակության նպատակն է հուզականորեն և սեցիակապես կայացած նախադպրոցականի ձևավորմանը,որն արդյունավետ իրականացնելու համար մանկավարժը կարող է առավել կարևորել մասնակի որևէ նպատակ՝ երեխային դպրոցային լիարժեք նախապատրաստելու հարցը,նրա ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու անհրաժեշտությունը կամ երեխայի ֆիզիկական կամ հոգեկան առողջության ամրապնդման խնդիրը: Մանկավարժական գործունեության ընթացքում ակտիվ դերակատարի ՝ սուբյեկտի դերում հանդես է գալիս մանկավարժը,իսկ երեխան՝ ուսումնասիրության առարկայի կամ օբյեկտի դերում: Նշված տրամաբանության դերում մնկավարժական գործունեությունն իրենիվ ներկայացնում է սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերությունների համակարգ:

Անհրաժեշտ է մշտապես հիշել,որ մանավարժի գործունեությունը պայմանավորված է երեխայի զարգացման ընթացքով,այն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ հաշվի է առնում երեխայի մեջ տեղի ունեցող էական փոփոխությունները:

Աճող երեխայի զարգացման ընթացքում դրսևորվող զգալի փոփոխությունները նույնպես ներգործում են և շտկում մանկավարժի գործողություններն ու գործունեությունը: Այստեղ երեխան հանդես է գալիս մանկավարժական գործունեության ոչ թե օբյեկտի,այլ սուբյեկտի դերում: Այսպիսով, մանկավարժական գործունեությունը սուբյեկտների փոխգործունեության հիման վրա կառուցվող անհատականացված և ստեղծագործական բնույթի գործընթաց է:

Հաջորդ բաղադրատարը մանկավարժական գործունեության միջոցներն են, որոնք ամբողջանում են մանկավարժի վարպետության և մանկավարժական ոճի մեջ: Մասնագիտական որակները ձևավորվում են մասնակիտական կայացման ընթացքում և կատարելագործվում են անձնային հատկությունների ներքո: Ընդունելով նախադպրոցական կրթոջախի մանկավարժի անձնային և մասնագիտական որակների միասնական բնույթը, ներկայացվում են փոխկապակցված կարգով:

Անձնային որակներ	ՄասնագիտԱԿԱՆ որակներ
Մարդասիրություն	Սեր և նվիրվածություն երեխային
Բարություն	Հանդուրժողականություն
Համբերատարություն	Աշխատասիրություն
Արդարամտություն	Օբյեկտիվություն
Ազնվություն	Անշահախնդրություն
Պատասխանատվություն	Համառություն,նպատակասլացություն,կ ազ մակերպվածություն
Պարտավորվածություն	Ձիջելու,ներելու կարողություն
Անմիջականություն,պարզություն	Վաստակելու,հավատալու ունակություն
Լավատեսություն	Մանկավարժական ռիսկ և ռոմանտիիկա
Բարիացակամություն,անկեղծություն	Մանկավարժական տակտ
Ձսպվածություն	Մանկավարժական
Հավասարակշռված կեցվածք,ինքնատիրապետում	Պահանջկոտություն
Կարգապահություն	Հարգանք երեխայի անձի հանդեպ
Ինքնավստահություն,արժանապատվութ յու ն	Մանկավարժական ռեֆլեքսիա
Ինքնաքննադատություն	Մանկավարժական հաղորդակցման կուլտուրա

Ընկերասիրություն	

2.2 Մասնագիտական գիտելիքների յ հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը

Մանկավարժությունը որպես գիտություն, գիտական աշխարհընկալման ոլորտ, մարդկային էության կատարելագործմանը նպաստող պայմանների ուսումնասիրման բնագավառ, ձևավորվել է միայն 17-րդ դարում՝ չեխ հանրահայտմանկավարժ Յան Ամոս Կոմենակու մանկավարժական գաղափարների և իշխանությունների շնորհիվ: Մանկավարժությունը երիտասարդ գիտություն է: Այն զարգացման բուռն շրջան է ապրել 18-20-րդ դարերում,ինչը նպաստելն է նաև մանկավարժի մասնագիտության ձևավորմանը: Մանկավարժությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ աճող սերնդի դաստիարակության, ուսուցմն և կրթության: Դաստիարակության գործընթացը վերամշակվում և կատարելագործվում է անձնային հատկությունների ձևավորման եղանակների վերանցման և վերակառուցման ճանապարհով: Ուսուցման գործընթացը զարգանում է երեխաների գիտելիքների փոխանցելու, նրանց մտածողությունն ու ստեղծագործական ընդունակությունները լավագույնս զարգացնելու օպտիմալ ուղիների մշակման կատարելագործման ուղղությամբ: Մանկավարժությունը հանդես է գալիս որպես գիտություն և արվես և օգտագործվում է երկու նշանակությամբ.

-Գիտական աշխարհաճանաչման բնագավառ գիտություն:

-Մարդկային պրակտիկ գործունեության,մարդկային փորձի փոխանցման մանկավարժական արվեստ:

Ինչպես և ցանկացած այլ գիտություն, մանկավարժությունն օգտագործում է հասկացություններ,որոնք բնորոշում և հիմնավորում են գիտության նշված բնագավառը: Մանկավարժությունն ուսումնասիրում է երեխայի ձևավորման,դաստիարակության և կրթության օրինաչափություններըտարիքային բոլոր փուլերում: Սերնդի կայացման գործընթացըբնորոշում է լայն իմաստով դաստիարակության բնույթով և ընթացքով:Մանկավարժությունը գիտություն է դաստիարակության մասին,մանկավարժության ուսումնասիրության ոլորտն է դաստիարակության ընդհանուրգործընթացն իր բոլոր մասնակի դրսևորումներով: Դաստիարակության հասկացությունը մանկավարժության մեջ օգտագործվում է երկու թոխկապակցված նշանակություններով՝ հասարակական և մանկավարժական: Դաստիարակությունը սեցիալական երևույթ է, հասարակության գործառույթ,որի նպատակը աճող սննդային կուտակված պատմահասարակական փորձի ծավալուն համակարգում մանկավարժությունը հետաքրքրում են համամարդկային արժեքները, հետևաբար հասարակական իմաստավորմամբ դաստիարակությունը կարող է ներկայացնել որպես երեխայի արժեքային համակարգի ձևավորման գործընթաց,որին մասնկացում ենհասարակության բոլոր սոցիալակն օղակները՝ ընտանիքը, կրթական համակարգը, էթնիկ միջավայրն իր մշակութային արժեքներով և զարգացման մակարդակով, արվեստի օղակները: Ժամանակակից մանկավարժության ներկայացուցիչներ, տեսաբաններ՝ Բ.Ս. Գերշունակին, Ն.Դ. Նիկանդրովը, Մ.Վ. Բոգուսլավսկին, Լ. Ի. Նովիկովան, Վ.Ա. Կարակովսկին արժեքային համակարգը ներկայացնում են բուրգի տեսքով և պայմանականորեն տրոհում: Արժեքների յուրացման արդյունքումերեխան առանձնացնում է սեփական <<ես>>-ը և թորձում գտնել իր տեղը հասարակակն միջավայրում: Արժեքային համակարգի երկրորդ աստիճանի վրա են գտնվում ներընտանեկան և տոհմական արժեքները, որոնք ինչպես և եսակենտրոն արժեքները, յուրացվում են հիմնականում ընտանեկան դաստիարակության պայմաններու և նպաստում երեխայի ինքնապահպանմանը, ինքնուրույն հաստատմանը: Երրորդ մակարդակն են կազմում հասարակակն, ազգային քաղաքացիական արժեքները, որոնց յուրացումը ենթադրում է նպատակային հասարակակնն ուղղված պետական և ազգային մտածելակերպի ձևավորմանը,

հասարակական պահանջմունքների բավարարմանը, սոցիալական արժեքների յուրացմանը: Չորրորդ մակարդակի վրա են գտնվում համամարդկային արժեքները, որոնք ենթակա են յուրացման երկարատև նպատակաուղղված մանկավարժական աշխատանքի շնորհիվ: Մանկավարժության գերխնդիրն է բարենպաստ պայմանների ստեղծման և դաստիարակության գործընթացի գործիմաց կազմակերպման միջոցով առավելագույնս նպաստել համամարդկայինարժեքների յուրացմանը, երեխաների մեջ ձևավորել հումանիտաևական վերաբերմունք աշխարհի հանդեպ:

Լիտվիայի մանկավարժ Բ. Բիտինասը վերլուծելով արժեքային համակարգի յուրացման ընթացքը, բնութագրում է այն արժեքների ուղղվածության բնույթով և դրանով պայմանավորում արժեքային համակարգի յուրացման արդյունավետությունը: Արժեքային համակարգի յուրացման ընթացքը

Հիմնավորում և առավել կարևորում է հասարակակն դաստիարակության և մանկավարժական ներգործության անհրաժեշտությունը, դրանց դերն ու նշանակությունըերեխայի անձնավորության զարգացման գործում; Դաստիարակության սոցիալական նշանակությունն ակամայից պարտադրում է հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթացի անհրաժեշտության լայն մանկավարժական առումով դաստիարակությունն իրենից ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձնավորության ձևավորմանը:

Դաստիարակության արդյունքում երեխան սովորում է ինքնուրույն ճանարել աշխարհը, ձեռք բերում որոշակի դիրքորոշում իր և շրջապատող մարդկանց հանդեպ:

Դաստիարակության հետ դիալետիկ կապի մեջ է ուսուցումը:

Ուսուցումը մանկավարժի և երեխայի ակտիվ փոխգործունեության յուրահատուկ ձև է, որի արդյունքում յուրացվում են գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ, զարգացնում են երեխայի ընդունակությունները:

Եզրակացություն

Կատարելով համապատասխան ուսումնասիրություններ և հետազոտելով մանկավարժական աշխատողին ներկայացվող պահանձները՝ եկա հետևյալ եզրահանգման.

- Մանկավարժական դաստիարակը պետք է ունենա վստահություն իր սաների կողմից,
- Լինի նախաձեռնող, արդարացի բարիացակամ,
- Ունենա ստեղծագործական սու միտք, կարողանա բավարարել երեխաների բազում հարցերի պատասխանները:
- Այսպիսով ժամանակակից մանկավարժը պետք է գտնի բազմաթիվ մեթոդներ և հնարներ, որպեսզի կարողանա պատվով իրականացնել նախադպրոցականի կրթությունն ու դաստիարակությունը:

Օգտագործված գրականություն

. Ս.Ա Մարության, Ա. Մ. Դալլաքյան

. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանի) կրթական համալիր ծրագիր Երևան 2011թ.

. <<Նախաշավիղ>> գիտամեթոդական հանդես:

. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանի) կրթական համալիր ծրագիր Երևան 2011թ: